ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի մայիսի 05-ին կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/02-2» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի ապրիլի 02-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը 2026թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.14 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ 05.05.2025Թ. N «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/02-2» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 02 » « 04 » 2026թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍՏ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 05.05.2025թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/02-2» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների 3-րդ չափաբաժնի մասով Պայմանագրով սահմանված առավելագույն գնից՝ 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամից, ծառայությունների մատուցման համար նախատեսված 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, 4-րդ չափաբաժնի մասով Պայմանագրով սահմանված առավելագույն գնից՝ 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամից, ծառայությունների մատուցման համար նախատեսված 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը՝ Կողմերը որոշեցին.

- Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը 2026թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ՍՏ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Հ. Հովհաննիսյան 95
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 02318918
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1510030824368200
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Ղեկավար Ն. Գալստյան	Տնօրեն՝ Հ. Մովսիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 02 » « 04 » 2026թ. կնքված N 2 համաձայնագրի

(Հավելված N 2
«05» «05» 2025թ. կնքված
«ԴԴ-ԳՀՇՁԲ-25/02-2» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	50311120/10	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	12 500	12 500	12 500	25 000	25 000	25 000	50 000	50 000	50 000	**50 000**
4	50311120/11	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	12 500	12 500	12 500	25 000	25 000	25 000	50 000	50 000	50 000	**50 000**

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Ղեկավար՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«ՍՏ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Հ. Հովհաննիսյան 95
ՀՎՀՀ՝ 02318918
Հ/Հ՝ 1510030824368200
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Հ. Մովսիսյան

/ստորագրություն/